Փլվել է Թբիլիսիի Երևանցոց Սուրբ Մինաս եկեղեցու տանիքը

2014 թվականի սեպտեմբերի 19-ի երեկոյան Թբիլիսիում փլվել է 1790 թվականին կառուցված Երևանցոց Սուրբ Մինաս խոնարհված եկեղեցու տանիքը:

Երևանցոց Սուրբ Մինաս եկեղեցին վիրահայոց թեմից բռնագրավվել է խորհրդային տարիներին: 2007 թ. հոկտեմբերի 1-ին Վրաստանի Մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարարի №3/181 հրամանով Սուրբ Մինաս եկեղեցուն տրվել է պատմական հուշարձանի կարգավիճակ: 2011 թ. Թբիլիսիի Գելաթի փողոցի Սուրբ Մինաս եկեղեցու հարևանությամբ ապրող բնակչի և զուգահեռ` Իորի փողոցի թիվ 30 տան բնակիչների կողմից, Իորի 30 հասցեով ստեղծվել է անշարժ գույքի տնօրինման ընկերություն, որը անհայտ պայմաններով եկեղեցու հասցեն փոխել է Իորի 30 և հանրային ռեեստրի որոշմամբ շենքը իր տարածքով սեփականաշնորհել: Վիրահայոց թեմը այս հարցով դիմել է դատախազություն, հարցը բարձրացվել է Վրաստանի իրավասու տարբեր մարմինների մոտ, սակայն մինչ օրս չի ստացել համապատասխան լուծում:

1 / 2

Փլվել է Թբիլիսիի Երևանցոց Սուրբ Մինաս եկեղեցու տանիքը

Վիրահայոց թեմը մեծ ցավ է ապրում պատմականորեն թեմին պատկանող, խորհրդային տարիներին բռնագրավված եկեղեցիները թեմին չվերադարձնելու պատճառով: Տասնամյակներ շարունակ անխնամ վիճակում գտնվելու հետևանքով տեղի են ունենում եկեղեցիների նման փլուզումներ. 2009 թվականին փլվեց Թբիլիսիի Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցին, 2012 թվականին` Սուրբ Նշան եկեղեցու զանգակատունը, հիմա էլ Սուրբ Մինաս եկեղեցու տանիքը:

Երեկ, տանիքի փլուզումից հետո դեպքի վայրում են եղել նաև Վրաստանի Մշակույթի նախարարության Հուշարձանների պահպանման հարցերով գործակալության ներկայացուցիչները:

Կորստի եզրին կանգնած պատմական հուշարձանները փլուզումից և յուրացումից փրկելու համար կոչ ենք անում Վրաստանի իշխանություններին նախաձեռնել համապատասխան քայլեր:

19 09 2014

19 09 2014

2 / 2